


ըստմէ Այս բանումն էլ Անդրեան յետ է թողել Երոպական միւս երկրները, որտեղ հոգեռուականութիւնը՝ բացի անհատ-ներից, միշտ գտնուել և գտնւում է պահպանողական կուսակցութիւնների կողմը՝ միշտ ամենաամուր նեցուկ լինելով յետադիմութեան և պահպանողականութեան:



Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՀԵՆՐԻ ԶՈՐԶ

Հողից լաւագոյն կերպով օգտուելու գլխաւոր արգելքը հողային մասնաւոր սեփականութիւն է:

Հասարակութեան մէջ տարածուած են շատ սխալ գաղափարներ, որոնց չնորհիւ մարդս չի կարողանում որոշել թէ՝ սրանցից ո՞րն է պատահական և որը—արմատական նշանակութիւն ունեցողը։ Այդ սխալ գաղափարների տարածմանը մեծապէս նպաստում են ստորին կարդի գրողները և քաղաքատնտեսութեամբ պարապողներն էլ մեծաւ մասամբ համակարծիք են այդ բանում, քան թէ նրանց հակառակ։ Սոցա ազգեցութեան չնորհիւ այժմս այն կարծիքն է տիրում հասարակութեան մէջ, որ մարդս կարող է լաւապէս օգտուել այն հողից, որն իրեն սեփականութիւն է կազմում, կամ այլ խօսքով՝ հողից լաւապէս օգտուելու համար հարկաւոր է հողային սեփականութիւնը և հողային անհատական սեփականութեան վերացումն ու համայնատիրութիւնը առաջ կը բերի գոյութիւն ունեցող կարգ ու կանոնի, քաղաքակրթութեան անկօւմն և հին վայրենի կարգերի գերիշանութիւն։

Այսիսի սխալ համազմունքը մեղ յիշեցնում է պատմագիր Զարլզ Լէմբի բերած մի հատուածը շինական հին

պատմութիւնից։ Աւանդութիւնն ասում է, որ հին շինացիք պատահաբար միայն խմացան, որ խորոված խոչքորը համեղ կերակուր է։ Նոքա չը գիտէին անասուններ խորովելն ու կերակուր պատրաստելը, մինչև որ Հօ-Ծի անունով մի շինացու տունը կրակ չընկաւ ու չը վառուեց և այնտեղ չը խորովուեց պատահմամբ փակուած մնացած խոչքորը։ Կերան այդ խոչքորը, հաւանեցին նրա խորոված միոր և դրանից յետոյ երկար ժամանակ շինացոց մէջ այն կարծիքն էր տիրում, որ խորոված խոչքոր ցանկացողը պէտք է նրան փակի բնակարանում, այնուհետեւ կրակ տայ, վառի տունը և ապա խորոված խոչքորը վայելի։ Դրանից յետոյ ասում է Լէմբին, շինացոց մէջ երեան եկաւ մի իմաստուն, որը ժողովրդին բացատրեց, որ խոչքոր խորովելու համար բոլորովին կարիք չկայ տներ այրելու։

Կարծում եմ, այսօր մեծ իմաստութիւն չի հարկաւ որ ըմբռնելու, որ հողից լաւապէս օգտուելու համար ըորորովին կարիք չկայ հողային սհփականութեան։ Հարկաւ որ է միայն, որ իւրաքանչիւր բանւորը համոզուած լինի, ոչ այն բոլորը, ինչ որ նա իւր աշխատանքով կը բռոցնի հողի վրայ, նրա սեփականութիւնը կլինի և ոչ ոք չի խիլ նրանից իւր աշխատանքով ստացած բերքը և այն սարք ու կարգը, որ նա կը հիմնի հողի վրայ և կը բարւոքի իրեն հողաբաժինը։

Բաւական է մի ակնարկ ձգել ձեր շուրջը, որ իսկոյն հասկանաք այս ճշմարտութիւնը։ Ասել, որ մարդու սեռանդ ներշնչելու համար հարկաւոր է հողը տալ որպէս սեփականութիւն, որ նա մշակի և բարելաւի իւր հողագործութիւնը, դա նման կլինի Լէմբի պատմածին, որ անպատճառ պէտք է տունը վառել, որ խորոված խոչքոր վայելենք։ Հողային սեփականութիւնն էլ ճիշտ նոյնպիսի կոպիտ, վայրենի և անմիտ պայման է հողագործութիւնն ու բերքը լաւացնելու և ապահով դարձնելու, ինչպէս տուն այրելը խոչքոր խորովելու համար։ Եթէ պնդենք հողային սեփականատիրութեան վրայ, այդ գէպըում մեզ

արդարացնելու համար այն միջոցներն անգամ չենք ունենալ, ինչ որ հին շինացիք ունեին: Մինչև այն իմաստունի երեան գալը, որը շինացիներին բացատրեց, թէ խոչքորը կարելի է խորովել և թոնրի կամ բուխարու մէջ շին հազցրած և ոչ թէ կրտել տուած տան մէջ, շինացիներից ոչ մինը չեր տեսել առանց տուն վառելու խորոված խոչքորը և չեր լսել նրա մասին: Իսկ մեր մէջ շատերը լաւ գիտեն, որ հողի ահագին տարածութիւն կայ մշակուած այնպիսի մարդկանց ձեռքով, որոնց իրք սեփականութիւն չի պատճանում այդ հողը:

Անգլիայի մեծագոյն մասը մշակուած է կապալառուների ձեռքով, Լօնդոնի շինութիւնների մեծագոյն մասը կառուցուած է վարձու գետնի վրայ, նոյնն է վոքրի կամ մեծ շափով նաև ուրիշ երկիրներում: Ահա այսպիսով մեզ համար շատ սովորական բան է այն երևոյթը, երբ հողագործն ու նրանից օգտուողը նոյն անձն է, իսկ հողատէրը՝ ուրիշ կողմնակի անձնաւորութիւն:

Մեր ծրագրով հողային սեփականութեանը վերջ պէտք է տրուի հետեւեալ ձեռքի: Հողային ամբողջ քահրան, որն այսօր տրւում է կալուածատէրերին ժողովրդի համար կորած է, այն մարդիկ, որոնց ձեռքին որ կլինի հողը, պարտաւոր պէտք է լինին վճարել աէրութեան կամ ժողովրդի կողմից ընտրուած մարդկանց, որպէս զի այդ ձեւով հաւաքուած դրամը վերջը կրկին գործադրուի ժողովրդի հասարակական կարիքների վրայ: Հողը ոչ ոքից չի խլուի, միայն ով որ հողից օգտուում է, պէտք է որոշ առուրք վճարի, իսկ այդ տուրքի քանակութիւնը կը որոշուի նրա հողի արժէքով: Եւ որովհետեւ հողի այդ արժէքը արդիւնք է նրա շրջակայրում ապրող ամբողջ սերնդի աշխատանքի, այդ պատճառով էլ հողից օգտուողը պարտաւոր է սահմանուած տուրքը վճարել այդ հասարաւիւթեան օգտին:

Այժմս ինքներդ գատեցէք, միթէ երկրագործ դասակարգը աւելի լաւ չի մշակիլ և բարւոքիլ իւր երկրագործութիւնն այն ժամանակ, երբ փոխանակ մասնաւոր

սեփականատիրոջը բահրա տալու, նա հասարակութեան կամ տէրութեան կը տայ այն։ Եթէ հողային մանաւոր սեփականութիւնը բոլորովին առաջ չը գար և երկրագործ աշխատաւոր ժողովուրդը իւր տուրքը միայն համայնքին վճարէր, միթէ այդ դէպքում նոյնքան լաւ չէր մշակի և չէր օգտուի, ինչպէս որ այժմս է մշակում և օգտում։ Այս դէպքում պատասխանը միայն մէկ է և դրական։ ի հարկէ լաւ կը մշակէր և կ'օգտուէր։ Ահա այս ձեռք հողն ընդհանուրի սեփականութիւն դարձնելը երբէք արգելվ չի լինի հողագործութեան բարգաւաճման և նրանից լաւապէս օգտուելուն։

Հողից օգտուելու համար ոչ թէ հողային սեփականութիւն է հակաւոր, այլ անպիսի կարգ ու կանոն, որ հողագործի աշխատանքի վաստակը և բարեզումն ապահովուած լինի նրա համար։

Մարդուն հող մշակելու և մշակագործութիւնը լաւացնելու համար երբէք կարիք չկայ առելու «թէ այս հողը քոնն է», Հարկաւոր է նրան ասել, որ ինչ էլ նա իւր աշխատանքով և դրամագլխով կը մշակի և կըստանայ հողից, իբեն սեփականութիւն է և նա ամենայն եռանգով կը մշակի և կը կպչի հողին։ Հաւատացրէք, որ նա կլինի այն տան տէրը, ինչ որ ինքն է ցանկանում կառուցանել և նա կշինի ցանկացած տունը։ Ահա սրանք են աշխատանքի բնական վարձատրութիւնը, մարդս մի միայն բերք ստանալու համար է շաղ տալիս սերմը հողի մէջ, միայն նրա համար է տուն շինում, որ ինքը տիրել կարողանաց նրան։ Հողային սեփականութիւնը այսաեղ ոչ մի նշանակութիւն չունի և ոչ մի դեր չի խաղում։ Մի միայն աշխատանքի այդ բնական վարձատրութիւնը՝ բերքն ապահովելու համար էր, որ ճորտութեան ֆէօդալական շրջանի ոկզրում հողային մանր սեփականատէրերից շատերն իրենց հողաբաժնները զիջան զինուորական պետին և նրանից խոստումն ու իրաւունք ստացան այդ հողից օգտուելու նրանք գլխաբաց և ծնկաշոք կանգնած էին իրենց պարոնի առաջ և իրենց ձեռները դնելով նրա աջ ձեռքի

զրայ, հանդիսաւոր երգում էին տալիս, որ կը ծառայեն նրան հոգով, մարմնով ու պատիւ տալով։ Այսպիսի օրիւ նակները մենք տեսնում ենք նաև Տաճկաստանում, երբ ժողովուրդը ուրիշին է զիջում հողային սեփականութիւնը միայն այն գիտաւորութեամբ, որ ինքը ապահով կերպով կարողանայ օգտուել այդ հողից, որ ապահովեն նրան այդ հողից օգտուելու գործը Տաճկաստանում տուրքերից ազատ են մասնաւորապէս «վակուֆ» կամ եկեղեցական կալուածները և այնտեղ շտա սովորական երեւոյթ է, երբ մասնաւոր հողատէրը թողնում է իւր կալուածքը որ և է ջամիի (մէջիթի) այս կամ այն գնով և այն պայմանով, որ ինքը վաճառած հողի վրայ մնայ որս պէս կապառալու և տիրոջը միայն որոշ բահրա, բէնտավճարի։

Ո՞չ թէ սեփականատիրութեան կախարդական ոյժն էր Ֆլամանդրիայի աւազները առատարես արտերի փոխողը, ասում է Արտուր Իւնգը, այլ այդ կախարդական ոյժը հողի բերքն ապահովելու մէջն էր։ Իսկ այդ բերքը կարելի է ապահովել ուրիշ ճանապարհով և ոչ թէ հողային սեփականութեամբ, ուղիղ այնպէս, ինչպէս որ խոչքոր խորովելու կրակը մարդս կարող է վառել և ունենալ առանց աներն այրելու։ Իրլանդիայի կալուածատէրը մի միայն մի հասարակ պայման կապեց կապալառու գիւղացիների հետ, այն, որ քսան տարուայ ընթացքում՝ ինքը ոչ մի տուրք ու բահրա չէր վերցնելու նրանից և այդ հանդամանքը բաւական եղաւ, որ նրանք սարել ու բլուրներ ամբողջովին այդիներ գարձնէին, Աշխարհիո ամենամեծ քաղաքներում՝ Լօնդոնում և Նիւեօրկում հողային սեփականատէրերը հասարակ ստորագրութիւն տուին կապալառուներին, որ նրանց հողերին ձեռք չեն տալ, այլ որոշ տարիների ընթացքում միայն հողացին կապալավարձ կըստանան և այս հանդամանքը բաւական էր կապալառուներին, որ վարձու հողերի վրայ ամենաթանկագին շինութիւններ կառուցանէին։ Ահա այս ձեռվ եթէ մենք ապահովենք հողագործ մարդկանց, հաստատապէս և հան-

գիստ սրտով կարող ենք վերջ դնել հողային մասնաւոր սեփականատիրութեան։

Հողն ընդհանուր սեփականութիւն դարձնելը (հողի համայնականացումը) երբէք արդելք չի կարող դառնալ, որ մարդս տէր լինի իւր աշխատանաց արդիւնքի և հողի վրայ իւր ստեղծած բարեկարդ մշակութեան և կուլտուրայի։ Մի շոգենաւի երկու հոգի կարող են տիրել առանց շոգենաւը միջից սղոցելու։ Եատ երկաթուղիներ կան, որոնք մի քանի հարիւր հազար տէրեր ունեն, այսինքն պատկանում են այն մարդկանց, որոնց ձեռքին որ գլունուում են այդ երկաթուղիների ակցիաները, սակայն այդ գծերի վրայ գնացքների երթեւեկութիւնը կատարւում է այնպիսի ճշտութեամբ և արտգութեամբ, որ կարծես թէ մի մարդու սեփականութիւն լինի այն։ Լօնդոնում կան միացած դրտմագլխով ընկերութիւններ, որոնք ձեռք են բերել և կառավարում են զանազան անշարժ կալուածներ։ Ահա այս ձեռվ հնարաւոր է պահպանել գործառնութեան ներկայ ձեր, մի և նոյն ժամանակ հողը համայնայնել ընդհանուրի սեփականութիւն ճանաչել), եթէ միայն հողի կապալը, բահրան կամ բէնտան գործ կը գրուի հասարակաց կարիքների վրայ։ Ամս-Ֆրանցիսկոս քաղաքի կեդրոնում կայ մի փոքրիկ հողաբաժինների մասնաւոր օրէնքով ճանաչուած է քաղաքացիների ընդհանուր սեփականութիւն։ այդ հողաբաժինը ոչ մանրիկ կտոների է բաժանուած և ոչ էլ խոպան տարածութիւն է ներկայացնում, այլ ծածկուած է գեղեցիկ շէնքերով, որոնք ապահովապէս մասնաւոր մարդկանց սեփականութիւն են կազմում։ Այդ և նրա շրջակայ տեղերում միայն այն զանազանութիւնը կայ, որ այդ տեղից ստացուած վարձը գործ է գրւում հասարակաց կարիքների վրայ, ծածկում է դպրոցների ծախսը, իսկ շրջակայ կալուածների վարձը կորչում է մասնաւոր գրալաններում։ Ուրեմն ինչը կարող է արդելք լինել, որ այս կամ այն տէրութեան հողը այդ երկրի ընտելիչների իրաւասութեան ներքոյ լինի։

Ալէուտեան արշիպելագի կղզիներից Միացեալ Նահանգներին պատկանում է Պետրոս-Պօղոսի փոքրիկ կղզիներ Ռուսաստանից գնած Ալիասկա թերակղզու հետ միասին։ Հողային սեփհականութեան կողմնակիցները կասեն, Միացեալ Նահանգներում ոչ մի տեղ հանգամանքներն այնքան նպաստաւոր չեն մասնաւոր սեփականութիւննեան, որքան այդ մասը կղզիների վրայ։ Այդեղ մեծ թուով ապրում են Սելապ կոչուած մազոտ փոքրիկ, զգոյշ և վախկոտ ջրային կենդանիներ, որոնք ամենափոքր աղմուկից այնպէս են խրտնում, որ երբէք այլ ևս չեն վերադառնում իրենց սովոր տեղերը։ Այդ կղզիներից ստացուղ միակ եկամուտը որսորդների կողմից վճարուող տուրքն է։ Այդ եկամուտը մշտապէս պահպանելու համար ոչ թէ հարկաւոր է միայն խնայել եք սելապներն և նրանց ձագերը, այլ չափազանց մեծ զգուշութիւն պէտք է, որ այդ կղզիների վրայ հրացան չ'արձակուի կամ շան հաջոցը չը լսուի։ Սելապները սովորաբար պառկում են ծովի քարոտ ափերին։ Որսորդը պէտք է կամացուկ քայլի նրանց մէջ, մինչև որ ցամաքի վրայ այդչափ վախկոտ, իսկ ծովում այնքան դիւրաշարժ կենդանիները, կը սովորեն նրան և կընայեն ընտանի կենդանիների պէս։ Որսորդը նրանց միջից ջոկում է այնպիսիների, որոնց կոտորելը մեծ վնաս չի տալ ամբողջ խմբին։ կամաց կամաց քշում է գէպի կղզու կեդրոնները և այնտեղ գաղանակներով կոտորում։ Այդ կղզիները եթէ զիջելու լինին բոլոր ցանկացողնեցին և իրաւունք տան, որ իւրաքանչիւրն իւր ուզածի պէս կոտորի այդ կենդանիներին, զործն այնպէս կը խանգարուէր, որ Միացեալ Նահանգները շուտով կը զրկուէին եկամտի այդ աղբեւրից։ Բայց դրա համար երբէք կարիք չկայ մասնաւոր սեփականութիւն գարձնելու այդ կղզիները։ Միացեալ Նահանգներն այդ կղզիները կապալով են տուել տարեկան 317,500 դոլարով։ Այդ կղզիներից Նահանգներն արդէն ստացել են երկու և կէս միլիոն դոլար (5 միլիոն ուռելի) եկամուտ, բայց կղզիների արժէքը երբէք չի քչացել, որովհետեւ յիշեալ գործը

շատ գեղեցիկ կերպով վարում է Ալեասկայի ընկերութիւնը և այդ կղզիները մինչև ցայսօր էլ կազմում են Միացեալ նահանգների ազգաբնակութեան ընդհանուր թանկարին սեփականութիւն։

Հողից կանոնաւոր օգտուելու համար ոչ թէ կարեսը չէ մասնաւոր հողատիրութիւնը, այլ ընդհակառակն նոյն իոկ վեսակար է. նա արգելք է հանդիսանում հողից կանոնաւորապէս օգտուելու գործում։

Եթէ հողը լինէր ընդհանուր սեփականութիւն, կարք եղած ժամանակ միշտ կը մշակեին և կը բարեկարգեին այն իոկ այսօր, երբ հողը գտնեւում է մասնաւոր սեփականատէրերի ձեռքին, նրանք կատարեալ իրաւունք ունեն ցանկացողներից ոչ ոքի չը թողնելու իրենց կալուածքը և թոյլ չը տալու, որ մշակեն և բարեկարգեն նրանց հողերը նոյնն է պատահում, երբ տիրապետութեան վէճ է ծագում՝ այս կամ այն հողաբաժնի վերաբերութեամբ, ամենանանգին տեղեր երկար տարիներով մնում են անմշակ Անդլիայի շատ տեղերում երբ կալուածատէրը մեռնում է և նրա սեփականութիւնն անցնում է ժառանգներին, գործն այնքան է ձգձգւում, որ երկրագործը ձեռք է քաշում այդ հողերից, որովհետև վստահ չէ, որ բերը ապահովապէս իրա սեփականութիւնը կլինի. Կան բազմաթիւ տեղեր, որոնք եթէ ընդհանուր համայնական սեփականութիւն լինէին, այսօր չենքերով կամ արտերով կլինէին ծածկուած, այն ինչ մասնաւոր սեփականատէրերի ձեռքին, որոնք խոտահարքի համար են պահում կամ սրտով չեն կազում գործին, այդ տեղերն ամայի են և անօգուտ։ Միացեալ նահանգների այն մասերում, որտեղ ազգաբնակութիւնը առաւել խիտ է, այնքան հող կայ, որ կարող է բաւականութիւն տալ երեք չորս անգամ աւելի մեծ ազգաբնակութեան. այն ինչ այդ հողերն այսօր ամայի են, գատարկ և անօգուտ, որովհետև նրանց տէրերը սպասում են, որ հողերի արժէրը բարձրանայ և իրենք աւելի թանկ գնով ծախեն և մեծ օգուտ ստանան իրենց հողերից։ Իոկ նորեկ գաղթականները ստիպուած են անցնել

այդ կալուածների կողքից և հող որոնել հեռաւոր տեղերում, որտեղ նրանց աշխատանքը աւելի փոքր չափով պէտք է վարձատրուի: Եոլոր քաղաքներումն էլ կարող էր տեսնել հողատէրերի կողմից նոյն նպատակով պարագ թողած անգին հողաբաժիններ: Եթէ խօսելու լինենք հողից կանոնաւորապէս օգտուելու մասին, չենք կարող մռացութեան չը տալ և չը ոչնչացնել հողային սեփականաւորութիւնը, որն արդարացնելու ոչ մի միջոց չկայ: Հողային սեփականաւորութիւնը նոյնքան է հարկաւոր երկրից կանոնաւորապէս օգտուելու համար, որքան տներ այրելը խոչքոր խորովելու համար:

Ե. Յ. Ա. Պ.

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Ս. Տ. Ի. Ջ. Ա. Ն.

(Լ. Ն. Տօլսովի.)

I.

Եթէ մարդ ցոյցի համար չի մի բան անում, այլ սրտանց կատարել է ուզում՝ այն ժամանակ նա անխուսափելի կերպով գործում է մի՝ գործի էութեամբ որոշ յաջորդականութեամբ: Եթէ մարդ յետոյ է կատարում այն՝ ինչ ըստ գործի էութեան առաջ պիտի կատարուէր, կամ բոլորովին բաց է թողնում այն՝ ինչ որ անհրաժեշտ է կատարել, որպէս զի կարելի լինի շարունակել գործը՝ այդ գէպքում անկատկած նա գործը լուրջ չի կատարում, այլ միայն ձեւցնում է: Այս օրէնքը անփոփոխ հաստատ է մնում ինչպէս նիւթական՝ այնպէս էլ ոչ նիւթական գործերում: Ինչպէս որ չի կարելի լուրջ ուղենալ հաց թիւել՝ նախ խմոր չհունցած, թոնիրը չվառած ու չսրած և այլն, հենց այդպէս էլ չի կարելի լուրջ կա-